ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՂԱՓԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պարսկաստանի համար տարեկան 10 ֆր. և կամ 4 րբլ. Թղթդրմ.
Եւրոպայի և այլ տեղերի համար տարեկան 20 ֆրանգ
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ լրագիրը ղրկելու փոստի ծախքը։
Բաժնեգիրները կանխիկ կը վճարուին։ Վեցամսեայ կամ եռամսեայ բաժնորդագրութիւններ ալ կընդունուին, առանց ուրէք յաւելման բաժնեգնին վրայ։ Հատով կը ծախուի ամեն տեղ 20 սանթիմ
Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Ե ՏԱՐԻ ԹԻԻ 17
1889 ՀՈԿՏԵՄԲԵՐ 16
ՀՈԿՏԵՄԲԵՐ 4 (Հ. Տ.)
ՕՐԱԹԵՐԹԱԲԱՐ
Կը հրատարակուի Դշ. և Շբթ. օրեր

ՊԱՏՄԱՆԵՆԵՐ
Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւններն։
Պարտաւոր չէ վերադարձունել չհրատարակուած ձեռագիրներն։
Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Յանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Rue Vacon, 50)

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐ

(Քաղուած կանոնագրէն)

«Հայոց Հայրենասիրական Միութեան» նպատակն է աշխատիլ վարչական բարենորոգութիւններ մտցունելու Թիւրքահայաստանի մէջ, Հայ ժողովրդի տեղական պէտքերին համեմատ։ Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրաւունք ստանալ ազատօրէն ինքզինք կառավարելու որով միայն պիտի կրնան վերնալ այն հարստահարութիւնները որոնք այսօր Հայաստանի թշուառութեան և աւերակ դառնալուն պատճառ կը լինին։

«Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը իւր նպատակ իրագործելու համար իւր կարողութեան չափով կը գործադրէ ամեն յարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջներին համեմատ. կաշխատի ներքին ոյժ գոյացունել Ազգին մէջ իւր ազատութեան համար, հրատարակութիւններ կանէ, դիմումներ կանէ որոց որ պէտք է և նիւթապէս ու բարոյապէս կը քաջալերէ անոնց որոնք անձնուիրութեամբ կաշխատին հայրենիքի ազատութեան գործին։

Միութիւնը կունենայ իրեն բերան եղող լրագիր որ, բացի զանազան լուրեր տալէ իրրեւ լրագիր, կը հաղորդէ ընդհանրութեան ինչ որ Միութիւնը ուղէ հաղորդել, տեղեկութիւններ կուտայ Հայաստանի և տարբնակ Հայերի դրութեան վրայ և կը ծառայէ հայրենասիրական եռանդը արծարծելու Հայերին մէջ։*

Ծանօթ. «Հայոց Հայրենասիրական Միութեան» անդամակցիլ կամ թղթակցիլ ուզողներն պէտք է դիմեն հետեւեալ հասցէին.

M. Portoukalian
(FRANCE) Marseille

* Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը կը նպատակ Արմենիա լրագրի հրատարակման։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պիտի է քաջալերել շարլատանութիւնը։ —Վեհ. Շահի մուտքը Դավրէժ եւ թեմական Առաջնորդի ներկայանալը։ — Ատըրպատականի Գեր. Առաջնորդի բողոքը Թիւրքիոյ Դատական նախարարին.—Սեբաստիոյ հայաբնակ վիճակաց արդի կացութիւնը.—Հայեր ի Ռուսիա։—Հայրենասէրների աղօթքը։—Արեւելեան Ճեմականներ (Ճեմակ կ. Պոլսեն)։— Արտասահմանի լուրեր. — Ծանուցումներ։ — Բանասիրական (Իմ հայրասպան ընկերը)։

ՊԻ՞ՏԻ Է ՔԱՋԱԼԵՐԵԼ ՇԱՐԼԱԹԱՆՈՒԹԻՒՆԸ

Մեր բարեկամներէ ոմանք կը հարցունեն մեզ թէ կարդացա՞ծ ենք արդեօք Հայաստան Թերթի հրատարակիչներին հանած այն յայտարարութիւն որով կը յայտարարէին թէ Պր. Կլատսթօն և Պր. Պրայս քիչ օրէն նախարար պիտի լինեն Անգլիոյ և եթէ այժմէն առատօրէն դրամ ղրկուի Հայաստանի հրատարակիչներին, իրենք ալ խոստում կուտան որ 3 տարի չգլեր, ինքնօրինութիւն տան Հայոց։ Եթէ կարդացած ենք այդ յայտարարութիւն, կը հարցնեն, ինչո՞ւ ոչինչ չենք գրեր այդ մասին. մինչ՝ մենք ալ մի քանի պարզամիտներու պէս անվնաս կը համարինք քաջալերել այսպիսի չարլատանութիւններն հայրենասիրական դործին մէջ։

Ճշմարիտ, կը խոստովանինք որ մենք այն յայտարարութիւն կարդալէ յետոյ այն համոզում ունեցանք որ ոեւէ փոքր ի չատէ խելահաս Հայ, եթէ մինչեւ այժմ դեռ չէր ճանչած Հայաստանի հրատարակիչներն, այդ անապարծութեամբ և չարլատանութեամբ լի գրուածը կարդալէ յետոյ անշուշտ հասկցած կը լինի առանց ոդին, դաղափարներն և ուղղութիւնը. և իրրեւ ղդայուն Հայ, մինչեւ իսկ ամօթ ու անպատուութիւն պիտի ղդայ այդպիսի մի գրուած մեր մէջ հրատարակուելու յանդգնութեան վրայ, բարեբաղդութիւն համարելով միայն որ հրատարակիչներն իրենք ալ հասկցեր և ամչնալով ֆրանսերէն լեզուով ալ չեն հրատարակեր այդ յայտարարութիւն. . . .

Հետեւապէս մենք այդ յայտարարութիւն մի այնպիսի առթին առիթ գրուած կը գտնէինք որ քննադատութեան անգամ արժանի չէր լիներ։ Եւ այսօր ալ մենք մտադիր չենք դարձեալ երկար գրել այդ մասին, այլ միայն մեր բարեկամներու կուղենք յայտարարել թէ մեր լռութիւն ուրիշ բան չէր նշանակեր, այլ այն թէ ամեն Հայ որ կարող է փոքր ի չատէ խորհիլ և դատել, զայն կարդալով ինքնին կը հասկնայ ամեն բան. իսկ դատողութենէ բոլորովին զուրկ գտնուողներուն որոնք ոչինչ հասկնալու կարողութիւն չունին, առայժմ գրելէ ուրիշ բան չէ կարելի անել և պէտք է համբերութեամբ սպասել որ Թերեւս անոնք ալ հետզհետէ զարգանան և ընդունակ դառնան հասկնալու ազգային կեանքի վերաբերող խնդիրներն, ընկերական յառաջդիման ամենատարրական պայմաններն։ Այո, չենք կարող խոստովանիլ դատապարտել մեր այն պարզամիտ հայրենակիցները որոնք այսպիսի չարլատանները առաջնորդելով կը մոլորին, իրենց ծուռումուռ ընթացքով անդիտակցաբար ուրիշներն ալ խոչընդոտ կը լինին և գործին ուղիղ ընթացքով յառաջանալուն կը վնասեն...։ Կը հաւատանք թէ կուգայ մի օր որ անոնք ալ պիտի հասկնան իրենց սխալ ընթացք, եթէ բոլորովին անընդդայ դարձած չլինին, և պիտի դղջան որ չարլատանութիւնները քաջալերելով միայն ժամանակ կորուսած են։

Մեղ կը հարցնեն ոմանք թէ Անգլիացիներէ կազմուած ի՞նչ մտաւոր ընկերութիւն է այն որ կը հովանաւորէ եղեր Հայաստանի հրատարակման։ Այդ մասին սակաւ կրնանք ըսել որ այդ մտաւորական ընկերութիւնը կազմուած է Հայաստանի համար յատկապէս չէ կազմուած Ներսէս Պատրիարքի ժամանակ երբ հայենական խնդրով կը զբաղէին, այդ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. Պոլսոյ Հայոց կեանքին առնուած մի իրական վէպ)

ԳՐՒԵՑ ԱՊԱՂԱՐԻՄ

(Շար. 16րդ թուէն)

Եւրոպացի բժիշկները մէկ ժամէ աւելի խորհրդակցութիւն ըրին հիւանդին վրայ։ Տօքթ. Պէռնար, խնդիրները համար երեւելի մասնագէտ բժիշկը, նախապէս իւր կարծիքը յայտնեց ընդհանուր դատախազին և յետոյ Տօքթ. Աղասեանէ ուղեց իւր տեղեկագրի պատճէնը։ Այս միջոցին Րիզա պէյ առաջին պաշտօնական տեղեկագիրը օգնականէն առնելով ցոյց տուաւ. Տօքթ. Պէրնար մեքենաբար գրպանէն ակնոցը դուրս առնելով զետեղեց քթին վրայ և կարդաց. մի քանի վայրկեան լուռ կեցաւ և յետոյ դառնալով ընդհանուր դատախազին ըսաւ. Եթէ այս տեղեկագրի վրայ կասկածելով հաւատարմութիւն չէք ունեցած, մեր կողմանէ տրուելիք տեղեկագրին ալ չվիտի հաւատաք, վասն զի մեր կարծիքն ալ Տօքթ. Աղասեանի տուած տեղեկագրի մի պատճէնը պիտի լինի. թէև անձամբ չեմ ճանչեր այն բժիշկները որոնք ուզած են պարծենկոտութեամբ գիրենք Տօքթ. Աղասեանէ աւելի մասնագէտ ցոյց տալ, Ձեր Մեծապատուութիւնը իմ կողմանէ փոխանորդ կը կարգեմ և կաղաչեմ որ իմ կողմանէ բարեւելով այդ անձանց ըսէք որ իրենք գիշերային թանձր խաւար մ'են և կուզեն մաքառիլ լուսոյ պէս յայտնի ճշմարտութեան դէմ։ Տօքթ. Պէրնար այս խորհրդաւոր բառերը արտասանելէ յետոյ, ամենայն քաղաքավարութեամբ հրաման ուղեց մեկնելու։ Րիզա պէյ կարմրեցաւ, դողդողուն քայլերով մօտեցաւ Տօքթ. Աղասեանի և ներողութիւն խնդրեց իւր գործած յանդգնութեանը համար, վասն զի Տօքթ. Պէրնարի խօսքերէն զգաց որ մի ղօրաւոր հարուած կերաւ իր բռնած սխալ ընթացքին համար։

Ժ

Ցունվար ամսոյ սկիզբները, ձմեռնային սաստիկ երեկոյ մը, արեւելեան սառն քամին կը փչէր սաստիկ գոռումով։ Աղքատիկ բնակարանի մը մէկ սենեկին մէջ որ ձիթային ճրագի աղօտ լուսովն լուսաւորուած էր, երկու մանկահասակ աբրաածներ, մին օրիորդ և միւսը փոքրիկ պատանի, կրակարանին մօտ վիմանց գրկուած պառկած էին պատառոտած անկողնոյ մը մէջ։ Ասոնցմէ քիչ հեռուն, չափահաս մի օրիորդ եւս փսխաթի վրայ նստած, գիշերապահ ուրուականներու նման առանձին սառնութեամբ կը նայէր երկու անմեղներուն և կը մտածէր իրենց ցաւալի վիճակին վրայ։ Սոքա Գէորգի մեծ քոյրը և փոքրիկ եղբայրն էին, որոնք տնտէր և անպաշտպան մնացած, աղքատութեան սոսկալի ճիրաններուն մատնուած էին. չափահաս օրիորդը տեսնելով իրենց այս թշուառութիւն, վճռած էր այլ եւս թողուլ այս անոտի աշխարհը և երթալ յաւիտենականութեան գիրկը. նա տխուր մտայուզութեան մէջ

անգլիական մասնաժողով կազմուած էր Հայերին օգնելու համար և 2 տարի ալ 200ական ոսկի նուէր ղրկեցին Հայ վարժարաններին օգնելու համար։ Բայց երբ յետոյ կենգանութեան նշաններն դադրեցան Հայոց մէջ, Մասնաժողովն ալ դադրեցաւ գոյութիւն ունենալէ իսկ երբ վերջերս Հայոց մէջ գարձեալ կենդանութեան նշաններ տեսնուելով վերսին ոգած էր գումարուիլ այդ անգլիական Մասնաժողով, Հայաստանի հրատարակիչներն առիթէն օգուտ քաղելով դիմած են անոնց և ըսած են թէ Հայերը կը վախնան և չեն օգներ իրենց, ուստի պիտի սիրուին դադրեցունել Հայաստանը և կաղաչեն որ իրենք օգնեն։ Անգլիացիներն ալ կը խոստանան։ Եւ այժմ այդ պարոններ այնպէս կը յայտարարեն թէ իրենք յոյժ գոհ են յատկապէս մի Մասնաժողով կազմել տալու։

Բայց այդ անպատասխանութիւն սովորական է արդէն անոնց։ Ինչ որ Անգլիոյ մէջ և աշխարհի զանազան անկիւններ կատարուին, կը փութան յայտարարել թէ Հայաստանի չնորհիվն եղած է այդ։ Ինչպէս ուրիշ տեղեր, Անգլիոյ մէջ ալ կը գտնուին Հայեր որոնք կը գործեն ազգին համար ո՛չ չահախնդրութեան և ո՛չ փառքի յոյսերով, այլ մի միայն հայրենասիրական դգացումով. հետևապէս անոնց անուններ բոլորովին անյայտ կը մնան, թերևս մի օր Հայաստանի անկախութեան պատմութեան մէջ յայտնուելու համար. և ահա այդ հանգամանքէ օգուտ կը քաղեն Հայաստանի հրատարակիչներն, իրենց անպատասխանութեան մէջ չափազանցելու համար ...։

Թո՛ղ անոնց ալ վարձատրութիւնը այդ լինի. իսկ անկեղծ հայրենասէրները իրենց գործին նային և անվրդով չարունակեն, առանց չեղերու իրենց ճանապարհէ . . .։

Մ. փ.

լինած կը նայէր ճրագի ճաճանչներուն։ Գիշերը բաւական անցել էր, աքաղաղներն ալ գրեթէ սաստկութենէն անհանգիստ ըլլալով կէս գիշերուան մէջ հեռագիրներ կը խօսէին։ Մաքրուհի դողդողուն քայլերով եղաւ կանգնեցաւ, ամբողջ մարմնով կը դողար ցրտէն, գնաց կրակարանը խառնեց, մի քանի խոշոր կայծեր տեսնուեցան, ունելիքով մէկ կողմ դրաւ այդ կայծերը և ծրարի մէջէն դուրս առաւ մէկ երկու կտոր ածուխ, դրաւ կրակարանին մէջ և յետոյ կայծերը չարեց ածուխին գագաթը և սկսաւ իր չնչովը սաստկացնել կրակը։ Մի քանի վայրկեան վերջը փոքրիկ սենեակը լեցուեցաւ թանձր մառախլապատ մուխով. ածուխը լաւ չէր չինուած, նրա ամբողջ մասը փայտ էր մնացել չինուելու տեղ. այդ թունաւոր մուխը կը կոչուի acide carbonique (ածխային թթու)։ շատ անգամ մարդիկ երբ անձնասպանութեան դիմեն, այդպէս ածուխի մուխով կը թունաւորեն ինքզինքնին։ Մաքրուհի կրակարանը առնելով իր վերմակի մէջ ամբողջ մարմնով ծածկուեցաւ որպէս զի

Վեհ. Շահի մուտքը Դավրէժ եւ թեմական Առաջնորդի ներկայանալը Նորին Վեհափառութեան *

Սեպտ. 5/17ին թագաւորական մունետիկը յայտարարում էր Դավրէժի հասարակութեան որ Վեհ. Շահը եւրոպական ճանապարհորդութիւնից վերադարձել է և հետեւեալ օրը սեպտ. 6/18ին կէսօրէն յետոյ կը մտնէ Դավրէժ, «Ալի քէօրբու» կոչուած կամուրջէն։ Ուստի այդ օրը, ինչպէս Դավրէժէն անցնելով գնալու օրըամբողջ հասարակութիւնը ընդունել էր Վեհ. Շահին, նոյնպէս չքեղութեամբ ընդունելու պատրաստութիւններ էին։ Կամուրջին մօտ չինուած էր 3 անգամ առաջուայ կամարից մեծ կամար որի կողքերին կը բարձրանային չատրուանները, շրջապատուած գոյնզգոյն դրօշիկներով։ Այդ կամարէն քիչ յետ կանգնել էին Հայերը իրանց թաղապետով. դարձեալ Ս. Առաջնորդ Մխիթարեանցի կարգադրութեամբ կանգնել էին քահանաներ և երկու թաղի ուսումնարանների աշակերտները։ Ժամը 7½ին, թնդանօթների գոռումները յայտնեցին Շահի գալուստը։ Ժամը 8ն էր երբ Շահը մօտեցաւ իր թափորով Հայերին. աշակերտները պարսկերէն լեզուով ընկսին երգել։ Շահը որ բաց կառքի մէջ էր նստած մէնակ, իր դէմքը լուսթիւնը յայտնեց բարեհաճով և գլուխ ուղղի Թագաւորական այդին։ Նախօրօք կարգադրած հրամանի համաձայն որոշուած էր որ ո՛չ հիւպատոսները և ո՛չ էլ Հայոց առաջնորդը չպէտք է գնան յառաջ, Շահի կամքի համաձայն, այլ պէտք է ներկայանան Այգում։

Ամսոյս 8/20ին Վեհ. Շահի որոշմամբ ներկայացան իրան հիւպատոսները և Ս. Առաջնորդը։ Նախ ներկայացան իրան հիւպատոսները, իսկ

---

* Թէեւ այս մասին մի նամակ հրատարակուած է Արմենիայի նախորդ թուին մէջ, բայց աւելորդ չհամարեցինք և այս հրատարակել, ասոր մէջ գրուած ինչ ինչ մանրամասնութիւններին համար։ ԽՄԲ։

ածխային թթուն դուրս չելնէ և աւելի չուտ ներգործէ թոյնը։ Նա հազիւ երկու վայրկեան կարող եղաւ դիմանալ. դեռ ինքզինքը չէր կորնցուցած, յանկարծ մտաբերեց որ եթէ անդգայ վիճակի մէջ լինի, կրակարանէն վառուելով ողջակէզ պիտի լինի. անմիջապէս վերմակին դուրս առաւ կրակարանը և մի քանի րոպէ եւս հագիւ կարողացաւ բռնել ինքզինքը, լինելու դէմին անգգայ վիճակի մէջ։ Նոյն ատեն նրա դէմքը ըստացաւ ածուխի գոյն և բերնէն սկսաւ հոսել հեղուկ մը որ ճիշտ կը նմանէր աճառի փրփուրի։ Երկու մանկահասակ անմեղներն ալ ածխային թոյնի ներգործութիւնն զգացած էին, նոքա սկսան թապլտկել անկողնոյն մէջ. անշուշտ կը զգային մեծ անհանգստութիւն, բայց չէին կարող ոտքի վրայ ելնել և ոչ ալ մի բառ արտասանել, վասն զի թոյնը թմրեցուցած էր անոնց երակայ արիւնը և սաստիկ նիհարցուցած էր մարմնոյ ջիղերը։

(Շարունակելի)

Ներանց մեկնելէն քիչ յետոյ ընդունեց մեր Ս. Առաջնորդին բալորովին առանձին. մի միայն Ս. Առաջնորդի մօտ գանուած էր հայազգի Մատուր Խան Մկրտիանեանը։ Վեհ. Շահը ստքի վրայ կանգնած էր դէմ յանդիման Առաջնորդին. այդաեղ Ս. Մխիթարեանցը Աստպատականի թուրքերէն լեզուով յայտնեց Հայ ազգի կողմէն իր բարի գալստեան համար չնորհաւորութիւնները և բարեմաղթութիւնները առաւ Շահի և իր գերդասանի համար ևայլն. նաեւ ներկայացրեց մի ծրար Վեհ. Շահին. այդ ծրարում կային մի քանի խնդիրներ որ Սրբազանը մատուցանում էր Նորին Վեհափառութեան, և թիւս որոց խնդրում էր Լիլավա թաղի Հայոց ուսումնարանի համար թոշակ, ինչպէս միւս ուսումնարանների համար կարգադրել է թոշակներ քանի տարիներէ ի վեր։ Վեհ. Շահը Ս. Մխիթարեանցի մտպեթանքները լսելէ յետոյ, նոյնպէս թուրքերէն լեզուով պատասխանեց թէ չափազանց գոհ է Հայերէն և բոլոր թէ մանաւանդ այս անգամ իմ ճանապարհորդութեանս ժամանակ ամեն տեղ Հայերի ինձ արած ընդունելութիւնները անկեղծ էին, նա մանաւանդ էջմիածնում եղած ժամանակ որ Ձեր Վեհ. Կաթողիկոսը արժանացրել կերպով ընդունեց ինձ. գոհ եմ բոլորից առհասարակ. ուրախ եմ որ այսուհետեւ յառաջանից աւելի եւս պէտք է սիրեմ Հայ ազգին և չպէտք է խնայեմ ոչ մի օգնութիւն անգամ նրանց համար. ուրեմն յայտնեցէք իմ բարեւս և չնորհակալութիւնս դարձեալ Հայոց կաթողիկոսին։ Այդ խօսակցութիւնը տեւեց մէկ քառորդ ժամ և Ս. Առաջնորդը մեկնեցաւ ուրախ տրամադրութեամբ եկաւ Հայ ազգին հաղորդեց Վեհ. Շահի խօսքերը. իսկ ինչ վերաբերում է Ս. Առաջնորդի արած խնդիրքներին, ես ժամանակին կը յայտնեմ Արմենիայի ընթերցողներին։

Վեհ. Շահը 3 օր մնալով Դավրէժում, սեպտ. 10/22ին մեկնեցաւ դէպի Թէհրան։

Ե.

1889 սեպտ. 10/22

Դավրէժ

Աստպատականի Գեր. Առաջնորդի բողոքը Թիւրքիոյ Դատական նախարարին

Դավրէժէն մեզ կը հաղորդեն հետեւեալը. «Աստպատականի Առաջնորդ Գեր. Սահակեան եպիսկոպոս Մխիթարեանցը Զուլա կէտին կը բռնուին առթով մի բողոքագիր է ղրկել Թուրքիոյ արդարութեան նախարար Զէվտէթ փաշային։ Սրբոյն Մխիթարեանցը իր այդ նամակի մէջ բողոքելով վանի Խալիլ փաշային դէմ, ասում է թէ կարապետ Գալաղոզլեանը գանուում էր իր թեմի մէջ գործակատարութեան պաշտօնով և ահա յանկարծ կալդում է լսագրում մի սուտ հեռագիր որ վանի Խալիլ փաշան է տուել յայտարարելով որ իբր թէ կարապետին սպանել են Զուլա կէտի-

---

քում իբրեւ ապստամբ։ Սրբազանը իր նամակում հարցնում է թէ ինչ նպատակով Խալիլ փաշան այդպիսի սուտ հեռագիր է խփում և ինչի համար անարդանք է բերում էջմիածնի ճեմարանի անուան. հետեւապէս խնդրում է Զէվտէթ փաշայից որ արդարութիւնը իմանալով ըստ այնմ վարուի և հերքէ սուտիքը. իսկ եթէ չի անի, այդ ժամանակ, գրում է Սրբազանը իր նամակի մէջ, ինք պարտաւոր կը լինի հրատարակութեան տալ իր նամակը ամբողջովին Հայոց թերթերում։ »

Սեբաստիոյ հայաբնակ վիճակաց արդի կացութիւնն

Սեբաստիոյ հարաւային և արեւելեան կողմը կիյնան Դանկալ, Մանճըլըգ, Կիւրին, Տալէնտէ, Գաչկիրի, Թոնուս, Հաճիլը, Էմիէզ, Եըլըզլը էլի, Աղիպայէ ևն. վիճակները, իւրաքանչիւրը 45–50 կոտր գիւղերով, յորս կը գանուին 8200 տուն Հայ առնուազն 45000 բնակչօք, քանզի Հայաստանի միւս կողմերուն նման հոս ալ իւրաքանչիւր տուն 15–20 անդամներէ կը բազկանայ. ժողովուրդը աշխատասէր, առողջակազմ ու խնայող, գլխաւորապէս երկրագործութեամբ և հովուութեամբ կ'զբաղին. սակայն հակառակ այս արդիւնաշատ պարագայից մատակարարելիք մեծատեան, ապրուստ ճարած և չորարեկ հացի կարօտ են, մի յաճախակի պատկառելի չեն հարստահարութիւնները, կեղեքումներ ու սպանութիւններ որք կուգան այս ժողովրդեան հանդիսան վրդովել և նորա արտերն, աքօտներն, արջառայ ու խաշանց հօտերն Զէրքէզաց, Քիւրտերու և այլ հրոսակներու բռնատարութեանց և յափշտակութեանց ենթարկուած են։ Հայ գիւղացու այս անտանելի կացութիւնն աւելի եւս վատթարացաւ վերջին սա ժամուս գաղթականաց յաճախելովն և նորա կեանքն ու կայքն բոլորովին այս անապահով վիճակին մէջ լինկան։ Այս առպատակութեանց գործին մէջ մեծ տեղ մը կը բռնէ իր բազմաթիւ ոճիրներով ու սպանութիւններով հրեշակառոյց Միւր–Ալի աւազակապետը, որ տասն տարիներ առաջ այս կողմերն գաղթելով կանխաւ ի Սեբաստիա Մէհմէտ Ալիէ * ստացած հրամանով համաձայն իր արիւնարբու հրոսակներովն կիջնէ հայաբնակ վիճակներն և չատ արատ, արօտներ ու ագարակներ կը գրաւէ, իւր արբանեակներն անդ պատապարելու համար. երբ գիւղացիք կընդդիմանան, սա պատասխանելով իւր գինու ղօրութեամբ, չատերն կ'սպանանուին, չատերը կը գանահարուին և կը վիրաւորուին, ցարհամ գիւղացիք կը գի-

---

* Սեբաստիոյ բնիկներէն է սա որ դողերու, մարդասպաններու ջերմ պաշտպանն է, սրիկայներու ընկերակից, աւազակաց հետ բաժանորդ, եղեռնագործութեանց մասնակից։ Տէրութիւնը ի վարձատրութիւն իւր այս հաւատարիմ պաշտօնէի, մեծ պատիւ ու աստիճաններ չնորհած է։

մեն կառավարութեան նորա պաշտպանութիւնն ու արդարութիւնը հայցելու, սակայն կառավարութիւնը ա-նզգայ կը մնայ նոցա ապիրատ արատասպ առջեւ, բազմքներն անպատիժ կը լինին, և սճրագործներն անպատիժ կը թողուին, որովհետեւ Մէհմէտ Ալի այդ բազմքներն միմտ.ր ալթի ըրած է և ո՛վ կընայ նորա որոշումներուն հակառակիլ. մինչ նահանգապետն կանչած անկէ... Ահա այսպէս հայ գիւղացու սեպհական կալուածներն այդ ասպատակներու ձեռքը կը գտնուին այժմ։

Թոնուս վիճակի փաշային հայաբնակ գիւղի մի ընդարձակ մարմանդն եւս այդ բռնաբարութեան ենթարկուած էր Մ.իհը Ալիի կողմէ. գիւղացիք որ բազմից բազմքեցին և իրենց քահներն կառավարութեան ճանկն գտապարկեցին, մինչ ցարդ ի նպաստ վճիռ մը չեն ստացած (անտարակոյս չնորհիւ Մէհմէտ Ալու) և իրաքանչիւր տարի խոտն հնձելու և հօտերն արածելու համար արհնահեղ կռիւներ տեղի կունենան։ Անցեալ օր եւս նոյն գիւղի բնիկներէն Գարտագճեան Գրիգոր անուն հասարակաց երիտասարդն՝ որ ընդ երկար դիմադրած էր և սպիպած իր հակառակորդներէն յետս կալ իրենց դիտաւորութենէն, մի քանի ընկերօք կերթայ նոյն մարդանդի խոտն հնձելու. այս պարագային Մ.իհը Ալիի մարդերն վրայ հասնելով կը բռնանան դարս ելնել և հնձուած խոտն թողուլ. երբ նոյն Գրիգորն կընդդիմանայ, իր վրայ կը տեղան ռեվոլվերի հրաչէկ գնտակայ կարկուտ մի և կինայ նա արհնաթաթաւ իր գետին կուրծքէն, ծածրակէն ու գլխէն գնդակահար եղած։ Ցիշեալի ընկերներն ոճրագործներէ մին ձերբակալելով իրենց դժբաղդ ղեկի հետ քաղաք կիջնեն և կառավարութեան կը դիմեն։ Այս պարագային դարձեալ Մէհմէտ Ալի մեծ գեր կը կատարէ. ոճրագործն, հակառակ անառակ վկայների հաստատութեան, անպարտ կարձակուի և կը ղրկուի որ երթայ իր ընկերներն ձերբակալէ՛։՛։՛ ի՛նչ դժբաղդութիւն. Հայերը պաշտպանելու համար կառավարութեան դուռը չորս ու կէս տարիէն ալ չկայ եղեր...։

(Շարունակելի)

ՀԱՑԵՐ Ի ՌՈՒՄԻԱ.

Կովկասէն մեզ կը գրեն հետեւեալ տեղեկութիւնները.

«Հաստատ տեղեկութիւն կայ այստեղ որ առաջիկայ տարուան մեր կօնֆերանսները* արգիլեն դանձանէ մի քանի հազար լուբլի նպաստ պէտք է տանան իրանց դիւանի կառավարութեան համար։ Այդպիսով Ռուսաց կառավարութիւնը մի ձեռքով ընդունելով Հայոց ուսումնարանները, միւս ձեռքը կամայ կամայ մեկնում է դէպի հայ եկեղեցին։

* Ռուսաստանի Հայոց կօնֆերանսները կը համապատասխանեն մասամբ Թիւրքիոյ Հայոց Կրօնական ժողովներին։ ԽՄԲ.

«Թիֆլիսի առաջնորդ Ալիստակէս եպիսկոպոս Սեդրակեանը որ սիրելի եղած էր ժողովրդին, հրաժարեցրած է իր պաշտօնից և նրա տեղ նշանակուած է Մամբրէ եպիսկոպոսը։»

ՀԱՑՐԵՆԱՍԻՐՆԵՐԻ ԱՂՕԹՔԸ (1)

Ո՛վ Տէր, մեր եղբայրների արեան և մեր քաղաքների հրդեհի ծուխը խաւնկի տեղ սկսած է բարձրանալ դէպի քեզ. այդ ծուխի մէջէն կուզղենք քեզ մեր ձայն։ Զարհուրելի գանգատ մ՚է այս ձայն, վերջին հառաչանք մ՚է։ Մարդու մազերը սոսկումէն կ՚ոսպիտակեան, երբ ստիպուած է այսպէս աղօթել։ Զեռք կտրող աղօթք ընել. ա՛լ հառաչանքն է մեր աղօթք։ Փշէ պսակը մեր ճակտի վրայ դրուած իբր նշան քո բարկութեան, մեր աղերսարկու ձեռքերը կը վերցուենք դէպի քեզ։ Եւ կը դիտենք երկինքը թէ արդեօք այդ բարձրութենէն հրեշտաւոր արեգակները կրակ գարձած չե՞ն թափիր մեր թշնամիների վրայ, զանոնք յանկարծակիի բերելով չփոթեցնելու համար։ Բայց ամէն ինչ հանդարտ է կապոյտ երկնքին վրայ և, ինչպէս միշտ, ազատ թռչունը կը թռչտի այնտեղ։ Եւ զարհուրելի տարակուսանքով մը մոլորուած, մեր հաւատքը մեր հոգւոյն մէջ սրմրնալէ յառաջ, մեր շրթունքը կը բացուի հայհոյելու համար, թէեւ մեր սրտին արիւն կերթայ։ Ներէ՛ ուրեմն, ով Տէր, և դառէ մեզ մեր սրտին նայելով և ոչ մեր խօսքերուն։

Քանի՛ քանի՛ անգամ դուռ մեզ պատժած ես մեր անմիաբանութեան մեղքին համար. և մենք մեր վերջին վերքերի արիւնը դեռ չմրցած, նորէն կապազակենք. «Նա կը դիմայ մեզ, որովհետեւ մեր հայրն է, մեր Տէրն է։» Եւ քո վրայ ունեցած հաւատքով զօրացած և մեր վրայ վստահացած, տակի կնշնէինք. Այլ սակայն թշնամին այժմ քու թողտուութեամբ նորէն կը ճնշէ մեզ և պիտի ջնջէ բոլորովին։ Անոր արհամարհական ծիծաղը ապտակած քարի պէս կուգայ կը զարնէ, կը ճմլէ մեր սիրտ և կը ձայնէ մեր երեսին ի վեր. Ո՞ր է ձեր Աստուած, ո՞ր է ձեր Հայր։

Ո՛վ Տէր, բոլոր աշխարհ լսեց այն քամիների դէպքերը որ պատահեցան մեզ այս միջոցին. բոլոր աշխարհ լսեց ու ստակց։ Որդին կը խոշխոշկն, հայրը կը խորովին, պղծիկը կը պղծեն իր մօր առաջ։ Մինչև մեր առուների մէջ ալ ձգած են խառնուածքի կտակը. հայրը կը վռնտէ որդին, քահանայն կը լռտեսէ ժողովրդին, եղբայրը մահուիչ կը դառնայ իր եղբօր. բազմաթիւ կայէններ կան այժմ մեր եղբայրների մէջ որոյմէ չըջապատուած ենք ամեն տեղ։ Բայց, ո՛վ Տէր, նոքա անմեղ են, թէեւ պատճառ կը լինի մեր ապագայի յոյսերը յետաձգելու. ուրիշ դեւեր կան որ անոնց թեւէն բռնած կառաչնորդեն։ Տէր, քո փայլակնացոյց սրովդ զարկ, պատժէ անոնց առաչնորդող ձեռքերը միայն։

Տէ՛ս, Տէր, դժբաղդութեան մէջ ալ մենք միշտ միւնոյնն ենք և քեզ կը դիմենք աղօթքով. քեղմով զօրացած կը քալենք յառաջ և նահատակութեան կարմիր վարդի անոյշ հոտը կը քաշէ մեզ իրեն. փոխանակ թըշնառութեան փուչէ պսակը կրելու մեր ճակտի վրայ, մարտիրոսութեան լուսեղէն պսակը թող ունենանք մեր գլխի վրայ։ Թո՛ղ քո հրեշտակապետ առաչնորդէ մեզ դի մենք կերթանք ա՛լ դէպի արիւնահեղ պատերազմը ուր մեր կրծնի և հայրենիքի թշնամուն դեռ բարախող սրտին մէջ պիտի մխենք և ցցենք քո յաղթական դրօշակ։ Այդ ժամանակ պիտի բանանք նաեւ մեր մոլորեալ եղբայրների սիրտերը և ազատութեան ջրով պիտի մկրտենք ու լուսանք անոնց անցեալ մեղքը։ Այդ ժամանակ վատ հայհոյիչը թո՛ղ լսէ նաեւ մեր պատասխան թէ կա՛ր եւ կա՛յ մի Աստուած։ Ամէն։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Le Sémaphore de Marseille լրագրին մէջ այս վերնագրի տակ կը կարդանք հետեւեալ բղթակցութիւնը։

Կ. Պոլիս 8 Հոկտ. 1889

Օսմանեան դրաքննութիւնը երկար վարանումներէ յետոյ վերջապէս թոյլատրեց Կ. Պոլսի լրագիրներին որ Վիլհելմ կայսրին Կ. Պոլիս այցելութեան նկատմամբ գրեն։ Կառավարութիւնը անտարակոյս ուզած է որ բոլորովին վստահ լինի Վիլհելմ կայսրի մտադրութեան վրայ վասն դի պէտք չէ որ մի այդպիսի լուր հրատարակուելէ յետոյ սուտ հանուի։ Այժմ օրուան ամենամեծ և միակ զբաղումն է այդ. ա՛լ ուրիշ բանի վրայ չեն մըտածեր բայց միայն մայրաքաղաքին արդուզարդը (toilette) յարդարել որ վայելուչ կերպով ներկայանայ ամենայն Աւմանիաի կայսրին առջեւ. ուստի հարկ եղած է քանդել խարխուլ և աւերականման խրճիթները, հարկ եղած է սալայատակել գլխաւոր մեծ փողոցները որոց մեծ մասը խորդուբորդ եղած, փոսերով լեցուած, անցնողի ոտքին առջեւ թակարդներ կը կազմեն։ Ես Գաղատան տեսած չեմ, բայց ապահովապէս կրնամ ըսել թէ այդ Թիւրքմէնական քաղաք աւելի լաւ սալայատակուած և պահպանուած կը լինի քան թէ փառաչնորհի մայրաքաղաքն եղող Կ. Պոլսի թաղերէ մի քանին։ Քաղաքային զօրքերին համար նոր համազգեստներ պատուիրած են. սկսած են նորոգել Տօլմա Պաղչէի կայսերական մեծ պալատին մէջ ամեն բաները, բազմոցները, դորգերը, ներկուած տեղերը։ Ապա-Լը-Ագիղի օրով չինուած ծանր բաշարժ զրահաւոր նաւերն որոնք երկար ժամանակէ ի վեր կը քնանային Ոսկեղջիւրի նաւարանները մէջ, յանկարծակի եկած կարծեցին այժմ իրենց քունէն բազմաթիւ գործաւորներու ձեռքով որոնք հրաման ստացած են զանոնք մաքրելու, վերատին ներկելու և կռուի կարգով շարելու, մեծ օրին համար պատրաստելով։

Այդ այցելութեան նկատմամբ, քաղաքական տեսակէտով զանազան մեկնութիւններ կուտան այստեղ իւրաքանչիւր բոլորովին հակառակ։ Ոմանք կըսեն թէ պարզապէս քաղաքավարական մի այցելութիւն է այդ։ Կան ոմանք ալ, որ թէև թերեւս ձեղնէ և ինձնէ աւելի տեղեկութիւն չունին, ծանրախոհ և լուրջ կերպարանք առնելով կըսեն թէ այդ մի նախանշան է Թիւրքիոյ և Աւմանիոյ սերտ դաշնակցութեան։ Սակայն անտարակուսելի է թէ երկար ատենէ ի վեր մշտերմական սերտ յարաբերութիւններ ստեղծուած են Պերլինի և Վիէննայի պալատներուն մէջ։ Կը յիշէք անշուշտ որ վախճանած Ֆրեդերիկ Վիլհելմ կայսրը 1880ին Կ. Պոլիս ղրկեց իր առաջին թիկնապահ Անգուստ Բաֆիվիլ իշխանը որ Սեւ Արծուի մեծ ժապաւէնի նշանը բերաւ յանձնեց Ապտ-իւլ-Համիտին։ Սուլթանը անոր փոխարէն ղրկեց Նիշանի Իմթիյազի պատուանշանը որ մարաջախտ Ալի Նիզամի փաշան տարաւ Պերլին։ Քիչ յետոյ յարաբերութիւնները սկսան աւելի չատնալ և Աւմանիացիները աշխատեցան այդ յարաբերութիւններին աւելի վճռական կանոնական մի կերպարան տալ։ Պրն. Ֆրիւբ, «Ինդանօթների թագաւոր»ը, իր պատրաստականութիւն յայտնեց տերը լեցնելու համար Օսմանցիներէ Ինդանօթներուն որոնք Ռուսը իրենց ձեռքէ խլած էր վերջին պատերազմին առեն. և պատմագրութիւնները հաստատուեցան մեծ քանակութեամբ Ինդանօթներ յանձնելու համար Ֆ. Դրան։ Մի քանի տարիէն յետոյ, Գ. Մաւզերի հետ ալ համաձայնուեցան որ յանձնառու եղաւ 540,000 հրացան տալ, հատը 83 ֆրանգի, և որ տ. նորոգմ ճչգապահութեամբ կը շարունակէ դեռ տալ, թէեւ Թիւրքերն երկար ատենէ ի վեր է որ հասկցած են թէ չատ սխալած են 83 ֆրանգ տալով մի այդպիսի ծանր, դժուարակիր և հնացած ձեւով պէնքի համար։

Առանց հետ մէկտեղ, Աւմանիան, միշտ առատաձեռն, բնծայած էր Թիւրքիոյ զինուորական կրթիչներ և քաղաքային պաշտօնատարներ երժտական, մաքսային, Թղթատարական, հանրային շինութիւններու, հոգեբժշկական և վճռատեսականական վարչութիւններուն համար և բոլոր այդ «մոնտագէռներ» կուգային այստեղ իրենց կիներով և տղայներով մէկտեղ և կը տեղաւորուէին մեր արուարձանի ամենագեղեցիկ տուներուն մէջ, այնպէս որ կարծես թէ Բէյրա արիւնական մի գաղթականութիւն դարձած էր։ Երբ Վիլհելմ Բ բարձրացաւ այն կայսերական գահին վրայ որ իր պապի սրտին կանգնուած էր, յատուկ խնամ տարաւ իր գահակալութիւն

(1) Հեռագրութիւն բոլոներէն Z Dymen Pozarow Հայրենասիրական մաղթանքին որ 1846ին, Կալիցիաի Զարգեբզն յետոյ, կերգէին Բոլոնիացիներն իրենց եկեղեցիների մէջ։

ծանուցանելու Սուլթանին, Բաւոլէնաքի իշխանին միջոցով։ Ապա-իւլ-Համիտ փուլթաց Պերլին ղրկել մարալջախտ Ալի Նիզամի փաշան որ իր հետ տարաւ Վիլհելմ կայսրին յանձնելու համար մեծ-ժապաւէնի պատուանշանը և երկու միլիոն ֆրանգի արժողութեամբ ընծաներ։ Այս եղաւ անցած մարտ ամսին մէջ և շատեր կը վստահացունեն այժմ թէ Վիլհելմ Բ արդէն այն ժամանակ իմացուցած էր Թիւրքիոյ մայրաքաղաքը տեսնելու և Սուլթանին անձամբ ծանօթանալու սաստիկ փափաքը։ Կրնաք ըմբռնել որ այդ առաջարկ յայտնի գոհունակութեամբ ընդունուած կըլլինի Թիւրքերէն, քանի որ երկարժամանակէ այ մի երազի իրականացումը պիտի լինէր, պատիւ և ոյժ պիտի բերէր Թիւրքիոյ. հետևապէս կիսապաշտօնական թարիգ լրագիրը այն օր որ Թողտուութիւն ստացաւ հրատարակելու այդ ուրախառիթ լուրը, յիշեցուց յայտնեց «այդ բախտաւոր դէպքի համար որ պիտի ամրապնդէ երկու վեհապետներին և երկու կառավարութիւններուն մէջ արդէն գոյութիւն ունեցող սերտ բարեկամութեան յարաբերութիւնները։»

(Շարունակելի)

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Վիէննայէն կը հեռագրեն հոկտ. 14ին հետեւեալը. «Լաւատեղեակ աղբիւրներէ առնուած տեղեկութիւններու համեմատ, Ֆէրտինանտ իշխանին Սոֆիայէն մեկնիլը կապակցութիւն ունի մի ամուսնական ծրագրի հետ. կըսուի թէ պիտի ամուսնանայ Պաւիէրայի Շարլը Թէոտոր իշխանի աղջիկներէ մէկին հետ։ Դահէն հրաժարելու լննդիր չկայ բնաւ. Իշխանն ու նախարարապետ Պ. Սթամպուլօֆ ամէնալաւ յարաբերութեան մէջ են։ Կը հաստատեն թէ Վիէննայի և Հռոմի կառավարութիւնները իմացուցած են Իշխանին որ իր իշխանութեան պաշտօնապէս ճանչցուելու խնդիրը գարձեալ յետաձգուած է առժամանակեայ կերպով։»

— Սոֆիայէն կը հեռագրեն հոկտ. 13ին. «Երէքշաբթի օր այստեղ եկաւ Իշխան Տօլկուրուքօֆ որ կը կարծուի թէ մի գաղտնի պաշտօն ունէր ռուսական կառավարութենէն յանձնուած։ Իր քաղաքական դաւերի ու խառնակչութիւնների համար, պուլկար կառավարութիւնը արտաքսեց զինք։»

— Ռուսիոյ Ձարը իր որդու, Գէորգի մեծ դքսին հետ հասած է Պերլին հոկտ. 11ին։ Վիլհելմ կայսրը, կայսերազն իշխաններն, իշխան Պիզմարք և իր որդի Էէրպերթի կոմսը և այլ բարձրաստիճան պաշտօնատարներ երկաթուղու կայարանը երթալով դիմաւորած են Ձարին։ Ալէքսանդր և Վիլհելմ կայսրները մի քանի անգամ իրար գրկելով ողջունած են և հանդիսաւոր կերպով կայարանէն գընացած իջած են ռուսական դեսպանատունը։ Ճաշկերոյթներ, ղօրահանդէսներ և այլն կը լինին Վեհափառ հիւրին պատուելու համար։ Կայսրները ճաշկերոյթի միջոցին իրարու փոխադարձ համակրութիւն յայտնող բաժակաճառերը խոսած են, թէև նկատի առնուած է սա կէտ որ Ձարը Վիլհելմ կայսրի բաժակաճառին պատասխանած է ֆրանսերէն լեզուով, փոխանակ ալմաներէնի։ Ձարը երկար տեսակցութիւն ունեցեր է իշխան Պիսմարքի հետ առանձնակի։ Բայց մինչեւ այժմ դեռ պարզուած չէ թէ այս տեսակցութիւն մի քաղաքական հետեւանք պիտի կրնա՞յ ունենալ թէ լոկ քաղաքավարական ձեւերի մէջ ամփոփուած պիտի մնայ։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Է

ԼԻՆԶԻ ՕՐԷՆՔԸ

ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(ՊԱՏԿԵՐ ՄՕՏԻԿ ԱՊԱԴԱՑԻՑ)

ԳՐՔԷ Մ. Պ.

(Այս տեսարակի մէջ ցոյց կը տրուի թէ բռնաւորների և աղգամատնիչ Հայերի դատաստանը ինչպէս պէտք է տեսնուի այնպիսի երկիրներու մէջ ուր օրինաւոր և արդարադատ կառավարութիւն չկայ։)

Մէկ օրինակի դինն է 20 սանթիմ. 20 օրինակը 3 ֆրանգ և 50 սանթիմ։ Փոստի ծախքը կը վճարուի Արմէնիայի խմբագրատունէն։

Հետեւեալ գիրքերն կարելի է ստանալ Արմէնիայի խմբագրատունէն, իրենց առջեւ նշանակուած գիներով և փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

Արժէքը կանխիկ վճարուած՝ գիրք չղրկուիր։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ա. ՀԱՅ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (սպառած)։

Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻ (սպառած)։

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԷԼԻ (Հայաստանի ազատութեան ցանկացող մի Հայի մաղթանքներն և մտածումներն են Մաղմոսի ոճով գրուած)· 40 սնթմ.։

Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒՂՂԱՐԻՈՅ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒՂՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՅ (Պուլղար աղգին իր աղատութիւն ձեռք բերելու համար մէկ դարէ ի վեր արած ջանքերի խիստ հետաքրքրաշարժ նկարագրութիւնն է։) 1 ֆր. 50 սթմ.։

Ե. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ · — (Հայաստանցիներուն թշուառութեան գլխաւոր պատճառներէն մին եղող պանդխտութիւնը մեր ազգային նորընտիր վիպասանի գրչին նիւթ եղած է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ անուն վէպին մէջ։ Իրական կեանքէ առնուած այդ վէպ որ մասնաւոր կը հրատարակուէր Արմէնիայի մէջ, առանձին տետրակով ևս հրատարակուած է այժմ և կը ծախուի Մեծ. Հեղինակին Պարոն Մկրտիչ Թիւթիւնճիէֆֆի մօտ, (ինչպէս նաեւ Արմէնիայի խմբագրատունը)։

1 ֆր· 20 սանթիմ

Զ. ԴԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ—ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենից առարտեղ. (Մեծանուն Հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ որոնք իւր «Բանաստեղծութիւնները»ի հատորին մէջ չեն գտնուիր, առանձինն տետրակով հրատարակուած են)։ Այս տետրակէ որի շահը բարեգործական մի նպատակի յատկացած է, 50 հատը մէկ անգամէն գնողին կը տրուի 50 հատը 2 ֆրանգ 50 սանթիմի, որ ըսել է հատը 5 սանթիմ կամ 10 փարա թրքական։

Հատով կը ծախուի 0.10 սթմ.

Վերոյգրեալ բոլոր գիրքերը կը ծախուին, փոստի ծախքը Արմէնիայի խմբագրատունէն վճարուելով։

ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐԻ

ՇԻՐՄԻՆ ՊԱՏԿԵՐԸ

Մեր վերջին թագաւոր Լեւոնի շիրմին պատկերն ունենալու համար չատեր կը դիմեն մեզ տակաւին, թէեւ վաղուց արդէն յայտարարած ենք թէ այդ պատկերները սպառուած են։ Արդ կուգանք յայտնել ցանկացողներուն թէ Արմէնիայի Ա. տարու 79րդ թուէն որ այդ պատկերը կըպարունակէ իւր մէջ և որ այդ պատճառով յատկապէս սովորականէն տարբեր գեղեցիկ թղթի վրայ տպուած է, մի քանի հատ տակաւին մնացած կան խմբագրատունը։ Ցանկացողներին կարող ենք ղրկել անոնցմէ, հատը մէկ ֆրանգի, ճանապարհածախքը խմբագրատան վրայ։

Այդ թերթի մէջ մանրամասն տեղեկութիւններ տրուած են նաեւ Լեւոնի գերեզմանին նկատմամբ։ Մեր ընթերցողները կը յիշեն թէ Արմէնիա լրագիրն էր որ Ա. տարու 72դ թուէն (1886 ապրիլ 24) հրաւէր կարդաց Փարիզահայ հայերին մի ուխտագնացութիւն հաստատել Լեւոն Լուսինեանի գերեզմանին և այդ առաջարկի համեմատ Ա. հանդիսաւոր ուխտագնացութիւնն եղաւ 1886 մայիս 18ին, ինչպէս որ մինչեւ այժմ կը կատարուի ամեն տարի։ Այդ, Արմէնիայի վերոյիշեալ թուէն մէջ, բացի այլ հետաքրքրական գրուածներէ, կայ նաեւ Փարիզէն մի թղթակցութիւն որ սրտայոյզ և գեղեցիկ ոճով կը նկարագրէ այդ առաջին ուխտագնացութիւն և հետաքրքրական տեղեկութիւններ կուտայ Սէն-Ժընեի այն շիրմի վրայ ուր հանգչած է մեր տարաբաղդ վերջին թագաւոր, Լեւոն Լուսինեան։

ՀԱՅ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐԸ

1878ին Պերլին գնացած հայ պատուիրակութեան պատկերը՝ գեղեցիկ թղթի վրայ առնուած և պատուիրակներուն անուններն հայերէն և ֆրանսերէն տառերով միանդամայն տպագրուած, կը ծախուի Արմէնիայի խմբագրատունը։ Գինն է 1 ֆրանգ, փոստի ծախքն խմբագրատունէն վճարուելով։

ԿԻՒԼԻՒԶԱՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ

Մուշէն Կ. Պոլիս գալով Մուսա պէյի դէմ դատ բացող հռչակաւոր աղջկան Կիւլիւղարի լուսանկար պատկերը, քապիճեի մեծութեամբ, ծախու կը գտնուի Արմէնիայի խմբագրատան մէջ։ Այդ պատկերները երկու տեսակ են. մէկին վրայ ներկայացուած է Կիւլիւզար առանձինն, իրազուժի անգլիական հիւպատոսէն իրեն նուիրուած խաչը վզէն կախած. իսկ միւս տեսակին վրայ միանգամայն նկարուած են Կիւլիւզար, իւր մայր, իւր հօրեղբայր քահանայն և Կիւլիւզարի մօտ նստած է մի փոքրիկ տղայ որ Մուսայէն սպանուած Յակորի 8 տարեկան Միհակ անուն որդին է։

Այդ երկու տեսակ պատկերները եւս միեւնոյն գինն ունին. այսինքն կը ծախուի հատը 1 ֆրանգ Մարսէյլի մէջ. իսկ Մարսէյլէ դուրս կը ղրկուի հատը 1 ֆր. և 10 սանթիմ բաց պահարանի մէջ դրուելով· իսկ պահարանի մէջ իրը նամակ փակելով կը ղրկուի 1 ֆր և 50 սնթմ։ Այդ պատկերների վաճառումէն եղած արդիւնքը յատկացած է մի բարեգործական նպատակի։

Ինչպէս ամեն լրագիրներ, Արմէնիան ալ կընդունի ծանուցումներ հրատարակելու համար. անոնք որ պէտք կունենան Արմէնիայի միջոցով մէկին դիմումանել կամ մի բան յայտարարել, պատրաստ են ընդունիլ իրենց ծանուցումներ ըստ լրագրական սովորութեան։ Ծանուցումների գիներն նշանակուած են Արմէնիայի ճակատը, տառի վրայ հաշուելով. 1 երկաթագրի (գլխագիր) համար 2 սանդիմ և 1 բոլորգրի համար 1 սանդիմ։ 3 անգամ դրուելիք ծանուցումի գինն վրայ %ին 10 զեղչ կը լինի· 10 և աւելի անգամներ դրուելիք ծանուցումի գինն վրայ 0/0ին 30 զեղչ։ Սակարկութիւն չընդունուիր։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ· ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ

Հայերէն տպարան Մ· Փորթուգալեանի

Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLE rue Vacon 50.